Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
25/03/2011թ թիվ 33-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Անդրանիկ Նորեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«12» ապրիլի 2011թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-031

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺՈՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳԾՈՎ ԲԺՇԿԻ ՑՈՒՑՈՒՄՈՎ ԲՈՒԺՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻՈՆ ԲՈՒԺՄԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՅԴ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԱՊԱՑՈՒՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2011

Աղյուսակ 1

Հ/h	Բժշկի ցուցումով նշանակված բուժական միջոցառումը	Հատուցման ենթակա առավելագույն սահմանաչափը (ՀՀ դրամ)	Անհրաժեշտության և հիմնավորվածության չափանիշները		Փաստացի ապացուցվածության չափանիշները
			Բուժական միջոցառման հիմքը	Տվյալ միջոցառումը նշանակելու առավելագույն ժամկետը	
1.	**Վերականգնողական (ռեաբիլիտացիոն) միջոցառումներ**	Ամսական 120 000՝ բուժման առաջին 2 ամիսների համար Ամսական 70 000՝ հետագա ամիսների համար	Ցուցված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի (մանկաբույժի, թերապևտի) և նշանակված ռեաբիլիտոլոգի կողմից:	Ըստ աղյուսակ 2-ում սահմանված ժամկետների՝ հաշվի առնելով սույն կանոնների 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները:	1) քաղվածք ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր, որտեղ նշված են՝ ա. մատուցված ծառայությունները, բ. յուրաքանչյուր ծառայության քանակը և գինը
2.	**Դեղորայքի ձեռքբերում**	40 000 (ամսական)	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Ըստ աղյուսակ 2-ում սահմանված ժամկետների՝ հաշվի առնելով սույն կանոնների 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները	1) քաղվածք հիվանդության պատմությունից և (կամ) ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր, որտեղ նշված են՝ ա. գնված դեղորայքը, բ. յուրաքանչյուր դեղորայքի քանակը և գինը

3.	**Մասնագիտացված տնային խնամք**	60 000 (ամսական)	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Ըստ աղյուսակ 2-ում սահմանված ժամկետների, սակայն ոչ ավելի, քան 3 ամիս՝ հաշվի առնելով սույն կանոնների 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները	1) քաղվածք հիվանդության պատմությունից և (կամ)ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր, որտեղ նշված են՝ ա. մատուցված ծառայությունները, բ. յուրաքանչյուր ծառայության քանակը և գինը
4.	**Ախտորոշիչ ամբուլատոր հետազոտություններ**	90 000՝ համակարգչային տոմոգրաֆիա և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիա հետազոտու-թյունների համար Ամսական 20 000՝ այլ հետազոտու-թյունների համար	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	Ըստ աղյուսակ 2-ում սահմանված ժամկետների՝ հաշվի առնելով սույն կանոնների 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները	1) քաղվածք ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր, որտեղ նշված են ա. կատարված հետազոտությունները, բ. յուրաքանչյուր հետազոտության քանակը և գինը
5.	**Սանատոր-կուրորտային բուժում**	250 000	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից՝ բացառապես ողնուղեղային կամ խոշոր հոդերի վնասվածքների դեպքում	3 շաբաթ	1) քաղվածք ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր՝ տրված սանատոր-կուրորտային բուժում ցուցաբերած հաստատության կողմից 3) քաղվածք

					սանատոր-կուրորտային հաստատության հիվանդության պատմությունից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով
6.	**Անվասայլակի ձեռքբերում**	70 000	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	-	1) քաղվածք ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) անվասայլակի ձեռքբերումը հավաստող հաշիվ-ապրանքագիր
7.	**Տեխնիկական այլ միջոցների և բժշկական պարագաների ձեռքբերում**	120 000	Նշանակված է սուր (հիվանդանոցային) շրջանը վարած բժշկի և (կամ) ընտանեկան բժշկի/ մանկաբույժի/ թերապևտի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից	-	1) քաղվածք ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր, որտեղ նշված են ա. ձեռքբերված տեխնիկական միջոցները բ. յուրաքանչյուր տեխնիկական միջոցի քանակը և գինը
8.	**Պրոթեզավորում**	-	Նշանակված է վնասվածքաբանի/օրթոպեդի և (կամ) ռեաբիլիտոլոգի կողմից		1) քաղվածք ամբուլատոր քարտից՝ հաստատված բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով 2) հաշիվ-ապրանքագիր, որտեղ նշված են ա. ձեռքբերված պրոթեզը կամ

				օրթեզը բ. յուրաքանչյուր պրոթեզի կամ օրթեզի քանակը և գինը
1)	Պրոթեզներ			
ա.	ստորին վերջույթի՝ ծնկան հոդից ներքև	400 000		
բ.	ստորին վերջույթի՝ ծնկան հոդից վերև	600 000		
գ.	վերին վերջույթի՝ դաստակ/նախադաստակ	200 000		
դ.	վերին վերջույթի՝ արմնկայի ն հոդից վերև	350 000		
ե.	վերին վերջույթի բիոպրոթեզ	1 000 000		
2)	Օրթեզներ			
ա.	սրունք-թաթային՝ 12-18 տարեկան	25 000		
բ.	սրունք-թաթային՝ 18 տարեկանից բարձր	35 000		
գ.	ծունկ-սրունք-թաթային՝ 12-18 տարեկան	80 000		
դ.	ծունկ-սրունք-թաթային՝ 18 տարեկանից բարձր	150 000		
ե.	կոնքազդրային հոդ-ծունկ-սրունք-թաթային՝ 12-18 տարեկան	110 000		
զ.	կոնքազդրային հոդ-ծունկ-սրունք-թաթային՝ 18 տարեկանից բարձր	200 000		
է.	կորսետ	90 000		

Աղյուսակ 2

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԺՇԿԻ ՑՈՒՑՈՒՄՈՎ ԲՈՒԺՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻՈՆ ԲՈՒԺՄԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ /ԲՈՒԺՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝
ԸՍՏ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ

	Վնասվածքը	Ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման առավելագույն ժամկետը
1. Գանգուղեղային վնասվածքներ		
1)	թեթև	1 ամիս
2)	միջին ծանրության	3 ամիս
3)	ծանր	12 ամիս
2. Ողնուղեղային վնասվածքներ		
1)	պարապլեգիա ոչ լրիվ	2 ամիս
2)	պարապլեգիա լրիվ	3 ամիս
3)	կվադրիպլեգիա ոչ լրիվ	6 ամիս
4)	կվադրիպլեգիա լրիվ	12 ամիս
3. Կոտրվածքներ , փափուկ հյուսվածքների և ներքին օրգանների վնասվածքներ		
1)	կոտրվածքներ	2 ամիս
2)	փափուկ հյուսվածքների վնասվածքներ	2 ամիս
3)	ներքին օրգանների վնասվածքներ	4 ամիս

1. Ընտանեկան բժիշկը (մանկաբույժը, թերապևտը կամ ռեաբիլիտոլոգը) սույն կանոնների աղյուսակ 1-ի 1-4-րդ կետերով նախատեսված բուժական միջոցառումները կարող է նշանակել առավելագույնը 2 ամիս ժամկետով:

2. Սույն կանոնների 1-ին կետով նախատեսված ժամկետում տուժողի առողջական վիճակի լրացուցիչ գնահատման արդյունքներով ընտանեկան բժիշկի

(մանկաբույժի, թերապևտի կամ ռեաբիլիտոլոգի) կողմից կարող են երկարաձգվել նախորդ նշանակման ժամանակ սահմանված բուժական միջոցառման ժամկետները, սակայն յուրաքանչյուր անգամ ոչ ավելի, քան 2 ամիս ժամկետով և սույն կանոնների 2-րդ աղյուսակով սահմանված առավելագույն ժամկետի շրջանակներում:

3. Ընտանեկան բժիշկի (մանկաբույժի, թերապևտի կամ ռեաբիլիտոլոգի) կողմից նշանակված բուժական միջոցառումը սույն կանոնների 1-ին կամ 2-րդ կետով սահմանված առավելագույն ժամկետները գերազանցելու դեպքում տվյալ միջոցառումն անհրաժեշտ և հիմնավորված է համարվում սույն կանոնների 1-ին կամ 2-րդ կետով սահմանված առավելագույն ժամկետների մասով, եթե այն համապատասխանում է սույն կանոններով ներկայացվող մյուս պահանջներին: